

# ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

## ԱՐԱ ԱՂԱԶԱՆՅԱՆ

Հին Արևելքի և անտիկ աշխարհի երկրներում զբոսաշրջության սկիզբը դրվել է Եգիպտոսի, Չինաստանի, Հունաստանի, Հռոմեական կայսրության կողմից: Այս երկրների ազնվականները մեկնում էին աշխարհի տարբեր ծայրեր գվարճանալու, առևտուր անելու և գործնական այլ նպատակներով: Հին աշխարհում դրա կայացման և հետագա զարգացման մեջ կարևոր դեր ունեցրել էր հատկապես Հռոմը, ուր մարդիկ գալիս էին տեսնելու կայսրության հարստությունն ու շքեղությունը, ինչը հայտնի էր ողջ աշխարհին: Բացի դրանից, ձևավորված ենթակառուցվածքների շնորհիվ Հռոմեական կայսրությունում ճանփորդելն անհամեմատ հեշտ էր: Զբոսաշրջությունը Հին աշխարհում իր բուն իմաստով զանգվածային բնույթ դեռևս չէր կրում: Հիմնականում դրսևորվում էր առևտրային ճանփորդությունների ձևով, որոնց ընթացքում տեղի էր ունենում մարդկանց մեծաքանակ շարժ տարբեր երկրներ:

Ի տարբերություն Հին աշխարհի, աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացման արդյունքում զբոսաշրջության ոլորտն այսօր առանձնացել է մյուս բնագավառներից: Ներկայումս զբոսաշրջությունը տնտեսության համակարգում, որպես առաջընթաց ապահովող գործոն, առանձնահատուկ նշանակություն ունի: Դա հատկապես կարևորվում է, քանի որ զբոսաշրջությունից ստացված եկամուտը համեմատաբար հավասարաչափ է բաշխվում: Այս հանգամանքն էլ ավելի է արժևորվում ներկա օրերում և հատկապես այն երկրների համար, որոնք չունեն համապատասխան բնական ռեսուրսներ լայնածավալ արդյունաբերական արտադրություն կազմակերպելու կամ էներգատար և հումքատար ճյուղերը զարգացնելու համար: Այդպիսի երկրները, չկարողանալով տնտեսության զարգացման հիմքում դնել վերոնշյալ ոլորտները, ստիպված են լինում զբաղվել կա՛մ առևտրաֆինանսական գործունեությամբ, կա՛մ բարձր տեխնոլոգիաներ պահանջող փոքր արտադրությունների կազմակերպմամբ, կա՛մ ծառայությունների մատուցմամբ: Նման երկիր է նաև Հայաստանի Հանրապետությունը: Մեր երկրում զբաղվածությունը հիմնականում ապահովվում է առևտրի ու դրամաշրջանառության կազմակերպմամբ: Առավել ողջունելի է, որ ՀՀ-ում վերջին տարիներին փորձում են հաջողությունների հասնել նաև բարձր տեխնոլոգիաներ պահանջող արտադրանքի թողարկման ոլորտում:

Ինչպես հայտնի է, տնտեսության բոլոր օղակները փոխկապված են: Այդ կապը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի: Օրինաչափ է նաև զբոսաշրջության և ամբողջ տնտեսության կապը: Զբոսաշրջու-

թյան զարգացման մասին վկայում են տվյալ երկիր այցելած զբոսաշրջիկների քանակը և մատուցված ծառայությունների որակը: Երկրի ներսում զբոսաշրջիկների ծախսած գումարի ամեն մի միավորը եկամուտ է համարվում նախևառաջ զբոսաշրջային կազմակերպության համար: Որքան ուժեղ և հզոր է կազմակերպությունը, այնքան ավելի շատ աշխատատեղեր ունենալու, աշխատողներին ավելի մեծ եկամուտներով ապահովելու հնարավորություն է ստեղծվում: Դա կախված է զբոսաշրջիկների քանակից, ովքեր դիմում են տվյալ կազմակերպությանը որոշակի ծառայություններ ստանալու ակնկալիքով: Այստեղ դրսևորվում է տնտեսության և զբոսաշրջության ուղղակի կապը:

Գոյություն ունի նաև անուղղակի ազդեցություն կամ բազմարկչի (մուլտիպլիկատորի) էֆեկտ, որը գործում է հետևյալ կերպ: Չբոսաշրջիկը, ձեռք բերելով կազմակերպության կողմից առաջարկվող ծառայությունները, ծախսում է իր տնօրինած եկամուտը, որը կազմակերպության համար դառնում է հարկվող եկամուտ: Հարկումից ստացված եկամուտը տնօրինում է տվյալ տարածաշրջանը<sup>1</sup>: Այստեղ սկիզբ է առնում «ծախս-եկամուտ-ծախս» շղթան: Սա օտարերկրյա ներդրումների ներգրավման յուրօրինակ ձև է:

Այլ կերպ ասած՝ «Բազմարկչի էֆեկտը զբոսաշրջիկի ներդրած փողի շրջապատույտի քանակն է ընդունող տարածաշրջանում»<sup>2</sup>: Վերոնշյալը մեկ անգամ ևս ամրագրում է զբոսաշրջության կարևորությունը և արդյունավետությունը ցանկացած երկրի համար: Այսօր կան մի շարք երկրներ, որոնցում այն համարվում է տնտեսության գերակա ճյուղ, քանի որ դրա ապահոված եկամուտները և այստեղ զբաղվածների թիվը գերազանցում են այլ ոլորտների նույն ցուցանիշները: Այս ամենի մասին են վկայում միջազգային զբոսաշրջության վերաբերյալ ստորև նշված տվյալները:

2009 թվականին միջազգային զբոսաշրջության եկամուտը կազմել է 852,0 միլիարդ ԱՄՆ դոլար<sup>3</sup>: 2008 թվականին առավել մեծ թվով զբոսաշրջիկներ ընդունած առաջատար 10 երկրների ցուցակը հետևյալն է.

	Երկիր	Մլն մարդ
1	Ֆրանսիա	79.3
2	ԱՄՆ	58.0
3	Իսպանիա	57.3
4	Չինաստան	57.3
5	Իտալիա	42.7
6	Մեծ Բրիտանիա	30.2
7	Ուկրաինա	25.4
8	Թուրքիա	25.0
9	Գերմանիա	24.9
10	Մեքսիկա	22.6


<sup>1</sup> Տե՛ս Квартальнов В. А., Туризм: учебник. М., 2004, էջ 150:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 151:

<sup>3</sup> Բոլոր տվյալները [www.world-tourism.org](http://www.world-tourism.org) կայքից են:

2000 թվականից սկսած՝ միջազգային զբոսաշրջության ոլորտում կայուն աճ է գրանցվել: Այդ տարում զբոսաշրջիկների թիվը 675,0 մլն էր, 2010 թվականին՝ 935,0 միլիոն: Տասը տարիների ընթացքում նվազում է արձանագրվել միայն 2009 թվականին, որը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանք էր: Համեմատության համար կարելի է նշել, որ 2008 թվականին՝ մինչ ճգնաժամը, զբոսաշրջիկների թիվը 913,0 միլիոն էր, իսկ 2009 թ. այդ թիվը կրճատվեց 36,0 միլիոնով՝ հասնելով 877,0 միլիոնի: Սակայն համաշխարհային տնտեսության վերականգնման հետ մեկտեղ մեծացան նաև զբոսաշրջության ծավալները՝ 2010 թ. ավելանալով 58 միլիոն մարդով: Ջրոսաշրջության շարժմթացը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով.

Գծապատկեր 1



*Ջրոսաշրջության միջազգային ծավալները (մլն մարդ)*

«Ջրոսաշրջությունը, մասնագետների գնահատմամբ, համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից է: Ջրոսաշրջությունը տնտեսական զարգացման հզոր կատալիզատոր է՝ ապահովելով կապիտալի շրջապտույտի մեծ արագություն, ներդրումների հետզնում և շահութաբերություն:

Ջրոսաշրջության կայուն զարգացումը նպաստում է կայուն տնտեսական զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, մշակութային արժեքների փոխադարձ արժևորմանը և այլն»<sup>4</sup>: Թեև զբոսաշրջությանը այսպիսի նշանակություն է տրվում,


<sup>4</sup> Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման 2010 թ. ծրագիրը. ընդունվել է 2010 թ. փետրվարի 11-ին (որոշում N203-Ն):

և ընդգծվում են դրա արդյունավետ կողմերը, տնտեսության վրա ունեցած ազդեցությունը, Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջությունը դեռևս չի համարվում գերակա ճյուղ: Ավելին՝ ինչպես 2010 թվականի, այնպես էլ 2011 թվականի բյուջեների հոդվածներով նախատեսվել է զբոսաշրջությանը տրամադրել ընդամենը 50,0 մլն դրամ, որը համեստ թիվ է որևէ լուրջ փոփոխություն կատարելու կամ զարգացման հստակ ծրագիր մշակելու համար:

Ջրոսաշրջության գործակալությունների գործունեության արդյունքում 2008 և 2009 թվականներին ՀՀ բյուջե մուտք է գործել համապատասխանաբար՝ 2344,8 և 2176,8 մլն դրամ<sup>5</sup>: Սրանք, իհարկե, զբոսաշրջային կենտրոններ համարվող երկրների դեպքում բավական փոքր գումարներ են, որոնք, անկասկած, կմեծանան մեր երկրում նշանակալից փոփոխությունների արդյունքում: Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ զբոսաշրջությունը, բացառությամբ 2009 թվականի, Հայաստանում կայուն աճ է ապահովել: Վերոնշյալը կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով.

Գծապատկեր 2

*Ջրոսաշրջության ծավալները ՀՀ-ում (մլն դրամ)*



Ըստ զբոսաշրջության զարգացման 2010 թ. ծրագրի տվյալների՝ 2008 թվականին Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է 558,4 հազ. մարդ, իսկ 2007 թվականին՝ 510,5 հազ. մարդ: Վերոնշյալ զարգացման ծրագրի համաձայն՝ 2010 թվականին զբոսաշրջիկների թիվը պետք է գերազանցեր 600,0 հազարը:

Ջրոսաշրջությունը դրսևորվում է տարբեր ձևերով: Այն կարող է լինել ճանաչողական, առողջարարական, կրոնական, մարզական, մասնագիտական և այլն: Անառարկելի է այն փաստը, որ տարբեր երկրներում կարելի է զարգացնել զբոսաշրջության մեկ կամ մի քանի տեսակներ: Լավագույն օրինակ են Եգիպտոսը, Իտալիան, Հունաստանը, ուր մարդիկ այցելում են՝ տեսնելու հիմնականում Հին աշխարհից որպես ժառանգություն մնացած պատմամշակութային արժեքներ, Շվեյցարիան, որը հայտնի է ձմեռային ակտիվ հանգստի կազմակերպմամբ, ԱՄՆ-ն՝ առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող իր մի շարք բնական վայրերով և

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետությանը վերաբերող բոլոր տվյալները [www.armstat.am](http://www.armstat.am) կայքից են:

ժամանակակից ժամանցային օջախներով, հարուստ քաղաքներով: Ինչպես տեսնում ենք, մարդկանց գրավում է այն ամենը, ինչը հետաքրքիր է և անսովոր:

Մեր կարծիքով՝ Հայաստանի Հանրապետությունը ունի բոլոր հնարավորությունները՝ քրիստոնեական աշխարհի համար դառնալու զբոսաշրջության կենտրոններից մեկը: Սա հատկապես պայմանավորված է պետականորեն առաջին քրիստոնյա երկիրը լինելով և հնագույն պաշտամունքային հուշարձաններ ունենալով: Ողջունելի է, որ վերջին տարիներին մեր երկիրը նպատակային գործունեություն ծավալեց այս ուղղությամբ, և արդյունքում ունեցանք այնպիսի զբոսաշրջային կենտրոններ, ինչպիսիք են Գեղարդը, Նորավանքը, Հաղպատն ու Սանահինը, Տաթևը, վերակառուցումից հետո, հուսով ենք՝ նաև Հաղարծինը և այլն:

Հայաստանը պետք է, որքան հնարավոր է, շատ այնպիսի ծրագրեր իրագործի, ինչպիսին, օրինակ, աշխարհի ամենաերկար ճուպանուղու կառուցումն էր: Այսպիսի նախագծերի մշակումն ու իրականացումն իր դրական նշանակությունը կունենա ինչպես զբոսաշրջության ակտիվացման, այնպես էլ տնտեսական զարգացման առումով:

Ջրոսաշրջային ոլորտում ներքին փոփոխություններ կատարելուց զատ, անհրաժեշտ է դրանց մասին տեղեկացնել հանրությանը ակտիվ գովազդային քաղաքականություն ծավալելու միջոցով: Դա պետք է ընդգրկի ոչ միայն ՀՀ-ն և տարածաշրջանը, այլ հարկ է ներառել նաև միջազգային շուկան: Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությունը զբոսաշրջիկների համար կդառնա հրապուրիչ երկիր:

**ԱՐԱ ԱԳԱԺՋԱՆԻԱՆ – *Стратегическое значение туризма для экономического развития.***- В статье представлено значение туризма для экономического развития, обеспечения экономического прогресса и решения ряда социальных проблем. Обсуждается прямое и косвенное влияние туризма на экономику. Представлены практические данные об Армянском и международном туризме. В статье также приводятся несколько предложений о том, как можно превратить Армению в привлекательную страну для туризма.

**ԱՐԱ ԱԳԻԱԺՋԱՆԻԱՆ – *Strategic importance of tourism for economic development.***- The article is about the importance of tourism to ensure economic progress, economic development and solve social problems. The problems of direct and indirect impact of tourism on the economy are discussed in this article. Practical information on Armenian and international tourism are presented. The article also makes some suggestions on how we can turn Armenia into an attractive country for tourists.